

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

Հ Ա Ն Դ Ի Ս Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

ԲԱՆԻ ՊՏՂՈՄԵԱՅ ԵՒ ՍՏՐԱԲՈՒՆԻ ԱՇԽԱՐՀԱԳԻՐՈՅ ՎՈՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ի բազում մատենագրաց Յունաց և Հռոմոց, երկուք ևեթ հնագոյնք՝ ոճով զՀայոց աշխարհէն խօսին, յորոց երիցագոյնն ժամանակաւ Պտղոմէոս Կլաւդեայ՝ աստղարաշխ և աշխարհագիր անուանի, որ եկեաց յառաջին կիսոյ երկրորդի դարուն զկնի Գրիստոսի յԱղեքսանդրիա, շարագրեաց զհոյակապ մատեանն իւր զՄեծն (Almageste) Տախտակ՝ յորում յայտ առնէ մանր եթէ երկիրս իցէ կենդրոն և միջավայր արեգական շարժութեանց. իսկ երկրորդ շարագրած սորա է Աշխարհագրութիւնն: Եւանթ իսկ է արդէն անուն Պտղոմեայ և մերոյս Մովսեսի Խորենացոյ՝ որ ՚ի գիրս Աշխարհագրութեանն իւրոյ յիշատակէ յանուանէ զմեծն Պտղոմէոս, թէպէտ և յընթացս աշխարհագրութեանն չգտաննմք ինչ հետս նմանութեան ընդ սա և ընդ մերս Խորնոյ ծերունին, բայց եթէ ՚ի սկզբան բանս ինչ, ուր խօսի ընդհանուր զաշխարհագրական ուսմանէն, զոր մարթ է և մեզ աստանօր փոքու իւրք նշանակել:

Աշխարհագրարիւն Մովսեսի և Պտղոմեայ Կրտսեայ.

ա. Էւ զքնակութիւն մարդկան ՚ի միջօրեական գծէն զդիրն ունելով ասպարիզական չափով ըստ նաւարկութեան և ըստ ճանապարհորդութեան իմացեալ զկայանան և զփոփոխելն, զայն այլուր այլապէս երևեալ¹:

բ. Քանզի որ ՚ի վերայ այրեցածին բերին կենդանատեսակքն, մտանն և ծագեն. բայց փոքր արջն՝ գեր ՚ի վերոյ կացեալ լինի երկրի ՚ի հիւսիսային կողմանս ասպարիզօք հինգ հարիւր և երկու հինգերեկօք²:

գ. Աւանդեն զԹուլիս կղզի՝ որ մեկնէ զհիւսիսականացն և ծանուցելոյ եր.

¹ Պտղոմեայ. ԳԼ. Բ:

² Պտղոմեայ է. (զայս բան ՚ի մեջ բերէ Պտղոմէոս ՚ի Մարինոսէ Տիւրացոյ):

կրի իբրև զգետ ըստ լայնութեանն չափ վաթսուն և երեք և յիսուն և եօթն, որպէս միջօրէական շրջանակն երեք հարիւր վաթսուն և երկու բիւրովք և վեցհազարեկօք մասամբ, հինգ հարիւր չափուց ասպարիզաց մերձ շուրջունելութեամբ ¹ :

Դ. Իսկ հարաւայինն խոնարհի 'ի սուզականն և սյլակերպ զսյլան երևեցուցանէ. որպէս Դիողորոս սամէացի պատմէ մեզ զՀնդկաց' թէ 'ի Լիմեոլիկոնն նաւելով յերկիրն՝ ունելով զՏաւուսն միջերկնեայ և զՊղայիդա ընդ մէջ Կեոեայ ² :

Ե. Իսկ յԱզանիա ընդ մէջ նաւելով երկրականն, զԿանարոս աստղ՝ որ է իպպոս 'ի նոցանէ երևեալ, և 'ի մէջ նոցա Ապոհոսիկիոն հնչական, և այլ բազում ինչ ³ :

Ն. Եւ զցամաքեալ գօտին բերելով ընդ մէջ տիեզերականին առ եթովպացւոց ճանապարհորդութեան յԱլիսիմբայ աշխարհէն, և զՊաասոն ժայր ընդ ձմեռնային շաւղօք յաներևականն և 'ի սուզականն կոյս ⁴ :

Զ. Յորս նախ առնելի զտիեզերաց ստորադրութիւնս նմանութեամբ գնդական պատկերին. և ապա ձևեալ ըստ նորին նմանութեան երկրորդ գնդական աստղականաւ զկէս շրջանակին մեծի ունելով հարիւր ութսուն բնակութիւն մարդկան: Եւ զվերաչափութիւն առնելով ժամադիտականաւն 'ի ձեռն երևելոյ աստուղաբոն և սկիթոն գործարանաց. բայց կարևոր է Դիոպտոայ առ 'ի ցամաքաչափութիւնն ⁵ :

Ահա յայտ եղև աստի՛ զի ընթերցեալ իցէ խորենացւոյ զգիրս Պտղոմեայ, և քաղեալ անտի փոքր 'ի շատէ՛ ոչ ինչ ուչ եղեալ և կարգի բանիցն: Այլ յաղազս Հայաստանի ոչ գտանեմք հաւաստի ինչ նշանակեալ 'ի Պտղոմեայ, որպէս յայտնի լիցի անշուշտ ընթերցանելեաց փոքու մասինս՝ զոր ստորև զետեղեմք. այլ զնէ անուանս իմն խառն 'ի խուռն և անիմանալի մեզ՝ բաց 'ի սակաւուց ոմանց:

Ընդ սմին յարեմք և զմիւս աշխարհագրին՝ զՄտրաբոնին զբանսն որ վասն աշխարհիս Հայաստան, որ ոճով ևս և երկարագոյնս ճառէ խառնեալ 'ի նոսա և ինչ ինչ պատմական բանս՝ որ չիցէ անշուշտ անօրուտ ինչ գործ համարեալ թարգմանել և զնել աստանօր 'ի ծանօթութիւն բանասիրայ:

Պտղոմեայ Աշխարհագրոշքիւն

ԳԻՐԳ Ե. ԳԼՈՒԽ Է

. ԴԻՐ ԳՈՔՈՒՆ ՀԱՅՈՑ

Փոքուն Հայոց հիւսիսական մասնն կոչի Որբալիսինի, և որ ընդ նովաւ կայ՝ Լառուանի, ապա՝ Էրիտիկի, և ընդ նովաւ Որսինի. և հարաւայնագոյն մասնն յետ Որսինեայ՝ Որբիսի:

Բարաքք ևն այս սա գետովն Եփրատոս:

Սինիրա (Սինիրրա) . Աղբիւս . Տալանդա (Լադանա) . Իսմարա (Սիմարա) . Զիմարա . Դասկուտա (Դասկուսա) :

Ի ևերբոյ և առ յերամբքն:

Սատալա . Դոմանա . Տապուրա . Նիկուպոլիս . Գորաբիա . Գարաքս . Ղազոնա . Սելէորորիա . Կալսիորիսսա . Ա

1 Պտղոմեայ Գլ. Է: 2 Պտղոմեայ Գլ. Է: 3 Պտղոմեայ Գլ. Է. (Թերևս հայ թարգմանն՝ զոյնն հասկացեալ և յեղեալ իցէ սպորթիկոն կը. յովս, որպէս ընծայէ ընթերցուած միոյ 'ի հնագոյն ձեռագրացս): 5 Պտղոմեայ Գլ. Բ.

Նալիբա (Ունալիբա) . Պիսինգարա . Գո-
դասա . Եւդիքասդա . Կարապէ . Մա-
սարայ . Որոմանդրոս . Խոպա . Փուփինա .
Արանէ . Փուփադինա (Փուփատինա) .
Մարդարա . Վասապա (Ուարասապա) .
Որսարա (Որսա) :

Միլիտինոյ տո Եփրատ գետովն :

Դագուսա . Սինիս կողմնիս . Մելիտինէ ,

(ի ներքոյ)

Չովպորիստոս . Տիտարիստոս . Կիրանի-
կա . Փուսիպարա . Եւսիմարա . Յասսոս .
Կիակիս . Լէգէսա (Լէտէսա) . Մարկա-
լա (Կարմալա) . Սիմիզոս . Լաինեսիս
(Լադինէրիս) :

ԳԼՈՒԽ ԺԳ . ԳԻՐՔ Ե

ՄԵԾԻՆ ՀԱՏՈՑ ԳԻՐՔ

Մեծ Հայք սահմանին՝ ՚ի հիւսիսոյ
կողմամբ Կոլքիսոյ և Իբեռիոյ և Աղուս-
նից ըստ գծին ձգելոյ ընդ գետն կուր :
Յարեմոսից կապապադոկիս , ըստ ուղ-
ղութեան Եւփրատոյ և կապապադոկա-
կանն Պոնտոսի մինչև ցիլիքիս (ընդ
Մոպական լերինն) : Եւ յարեելից՝ ՚ի
ձովէն Հիւրկանիոյ որ ՚ի բերանոյ կուր
գետոյն մինչև ցահմանն :

Եւ Մարաստան՝ ըստ այնմ ուղղու-
թեան , ցլեառն կասպիական . (և առ
նովա լեառն կասպիական , որոյ սահ-
մանքն ունին բաժինս . . .) :

Իսկ ՚ի հարաւոյ՝ Միջագետք . ընդ
Տաւրոս ձգեալ . որ յարի ընդ Եւփրատ
աստիճանս . . . ունեղով . և գետն Տիգրիս՝
որոյ աստիճանք . . . :

Եւ ապա Ատրեստան՝ ընդ լեառն
Նիմիատէս՝ ընդ նոյն ուղղութիւն ձը-
գեալ ցլեառն կասպիական , ընդ որ ձիւ
և լեառն Նիմիատէս (Նիփատէս) :

Եւ լերինք Հայաստանի կողին Մոս-
քիկեանք , որ ձգին մինչև ցՊոնտոս
կապապադոկական որ ՚ի վերոյն կայ . և
լեառն Պարիազրիս (Պարիարդիս) :

Եւ Ուգակեսպիս լեառն , որոյ միջինն
ունի աստիճանս . . . :

Եւ Անտիտաւրոսի մասն՝ որ ՚ի ներքոյ
Եւփրատոյ , որոյ միջինն ունի աստի-
ճանս . . . :

Եւ կոչեցեալն լեառն Արոս :

Եւ Կորդեան (Կորդիանք լերինք) :

Գետք ընթանան ընդ երկիրն . Երասխ
գետ՝ որոյ բերանք են առ երի վրկանայ
ձովուն . և աղբերակունք նորա անդէն :

Յորոց բղխեալ հոսէ յարեելս կոյ
կասպիական լերին , և շրջան առեալ առ
հիւսիսիւ , կէս նորա՝ ՚ի Հիւրկանիս Ի-
ջանէ , և կէսն ՚ի Կուր գետ . և ունի
վայրս՝ ՚ի Կուր գետ :

Իսկ գետոյն Եւփրատոյ մի մասն՝ յա-
սացեալ շրջանէն յարեելս իջեալ մինչև
յաղբերան :

Են և այլ լերինք անուանիք , անդրս .
տին ՚ի դարձից Եւփրատոյ . և սահ-
մանն՝ որ երթայ կրի ընդ Եփրատ գետ ,
և միւս սահմանն՝ որ հանդէպ աղբերա-
կանց լերինն :

Եւ մասն Տիգրիսի՝ որ կայ ՚ի Հայաս-
տանի՝ ՚ի հարաւային կողաց հատածէն
ցաղբերակունս նորին Տիգրիսի :

Կայ ձովակն որ կոչի Քոսպիտիս :
Են և այլ ձովակք . մի՛ որ կոչի Լիւքնի-
տիս և Արեխա :

Եւ են գաւառք ՚ի Հայաստան , որ
ընդ մէջ Եփրատոյ և Կուր գետոյն և Ե-
րասխայ : Առ լեւամբքն Մոպքիկեամբք՝
կատարդիինի , ՚ի վերոյ քան զնոսա՝ որ
կոչին Բաքք :

Առ Կուր գետով Ոսսարինի .
և Մովտինի :

Առ Երասխաւ՝ Կողթինի :

Եւ ընդ նովաւ՝ Սողուկինի :

Առ Պարիադէս լեւամբն՝ Սիբակինի .
և Սակարինի :

Եւ քաղաքք յայնմ բաժնի են՝

Սալա . Ասկուրա . Բարազա (Բարատա) .

Լալա . Սանդուտա . Սատափարա . Տով-

գա . Ուարուփտ (Ուաթուրա) . Ազատա .

Քուրա . Սիտալա . Սուրտա . Տասաինա .

Կողալա . Կոտոմանա . Բազիննա (Բա-
տիննա) . Այլալա կամ Լգալա . Պոտուա .

Գիդմա . Քուրաասա . Սակալքինա . Ար-
սարատա :

Եւ առ զետօկն Եփրատու շաղաքք այս .

Բրեստս . Ելեգիա . Քասիրա . Քորսա .
Քալինա . Արմատիարա (Արմատրիա) .
Արտաքսատա . Նաքսուանա :

Ի նմին բաժնի՛ զոր ասացաքս , մինչև
ցղարձս Եփրատայ՝ հիւսիսայինք են
գաւառքն՝ յարևմտից առեալ սկիզբն .

Բասիլիսինի . Բոլբինի և Արսիսա . և
ընդ սորօք՝ Ակիլիսինի , և Աւստանի .
տիս . և անդէն առ դարձիւք զետոյն
Մովսիսինի . և քաղաքք ՚ի նմին բաժնի
անդ՝ այս .

Չաթուա (Աթուա) . Տինիսսա . Չորի-
գա . Սանա . Բրիգակա . Տարանիսսա .
Չողոկարա . Կուբինա . Կոլանա (Կո-
ղանա) . Յաքուրա (Կաքուրա) . Քոլուա .
Սոզոկարա . Փաւսիւա . Փանդանա (Փա-
ղալիա) . Չարուանա . Կիտամն . Ա-
նարիոն . Սիգուա . Գերուա (Տերուա) .
Չուրղուրա (Չուրղուա) . Մազուստանա
(Մատուստանա) . Ատտականա (Ատա-
կանա) . Տարինա . Բալիսիսիգա . Բարի-
լա . Սաւքաանա (Մադաւանա) . Ողա-
րա (Ազորա) :

Ի մնացեալ և ՚ի հարաւային բաժնի ,
ընդ մէջ Եփրատայ և Տիգրիսի աղբ-
րացն ,

Ազիտինի (Անզիտինի) . և ընդ նո-
վաւ՝ Թուլսպիտիս . ապա՝ Կորինէա . և
քաղաքք ՚ի նմա .

Իլեգերդա (Ելեգերտա) . Մազարա . Ան-
զիտա . Սոիտա . Բելկանիա . Սելզիա .
Թուլսպիա . Կոլքիս . Սիսուանա . Արսա-
մոսատա . Կորրա :

Յարևելից աղբերացն Տիգրիսի՛ Բա-
զրաւանդինի (Բազրաւդաւինի) . և ընդ
նովաւ՝ Գորդինի . և յարևելակողմն նո-
րին՝ Կովտէա . և ընդ նովաւ՝ Մարդք .
և քաղաքք ՚ի նմա .

Փասկա (Տասկա) . Փոլրա . Մէպա .
Բուանա . Քոլլիմիա . Տերեբիա . Դա-
դիանա . Կապուտա . Արտեմիդիտա (Ար-
տիմիտա) . Թելքալանի .

և ընդ նովաւ՝ Գորդինիսիա .

Սիայք . Փերենդիս . Տիգրանոկերտա .
Սարդիուանա (Սարդիուա) . Կուլա . Տի-

գրանանա (Տիգրանանա) . Արտազի-
գարտա :

Ի Սորաբոնի աշխարհագրութեկ .

ԳՆՈՒԻ ԺԻ

Ա . Հարաւակողմն Հայաստանի ձգի
մինչև ցՏաւրոս , և անջրպետէ զնա
լեառնն այն ՚ի մասնէ անտի ողջոյն՝ որ
կայ ընդ Եփրատէս և ընդ Տիգրիս ՚ի
միջի , զոր Միջագետք յորոչընէն . Իսկ
արևելակողմն յարի ընդ մեծն Մարաս-
տան և ընդ Ատրոպատինի . և զհիւսի-
սեաւ կան լերինքն Պարաքրոսթրայ՝ որ
՚ի վերոյ կասպիական ծովուն , և Ա-
ղուանք և Իբերիացիք և Կաւկաս՝ որ
չուրջ պատեալ փակէ զաղբսն զայնո-
սիկ , և երթայ կցի ընդ աշխարհն Հա-
յաստան . Խառնի և ընդ Մոսքական
լերինն և կողքիսականաց՝ մինչև ցՏի-
բարանացիս . և յարևմտից կուսէ են
ազգքն այնոքիկ և Պարիաղրէս և Սկիւ-
դիսէս մինչև ՚ի փոքրն Հայս և ՚ի հունն
Եփրատու , որ անջրպետէ զՀայաստան
՚ի Կապպադոկիոյ և ՚ի Կոմմագինոյ :

Բ . Գանդի Եփրատէս զետ ՚ի հիւսի-
սոյ կողաց Տաւրոսի առեալ առաջս՝ հո-
սի նախ յարևմտակողմն Հայաստանի ,
ապա դարձ առնէ ՚ի հարաւ կոյս և հեր-
ձու զլեառն Տաւրոս ընդ Հայս , ընդ
կապպադոկացիս և ընդ կոմմագինա-
ցիս , և ՚ի դուրս ելեալ և թիւրեալ յԱ-
տրոլոց կողմն՝ խոտորի ՚ի ձմեռնական
արևելս մինչև ՚ի Բարիլոն . և առնու ՚ի
մէջ զՄիջագետս ընդ Տիգրիսի . և եր-
կոքին յանդին ՚ի ծոցն պարսկական :
Այնոքիկ որ շուրջ կան զՀայովք՝ գող-
ցիս ամենայն լեռնական է և դժուա-
րուտ , բայց ՚ի դոյզն մասնէ՝ որ ՚ի Մարս
ձգին , Դարձեալ կոյնցեալդ Տաւրոս
լեառն՝ առնու սկիզբն յայնմ կողմանէ
կոմմագինացոց և միլիտիանացոց՝ զոր
սահմանէ Եփրատէս . և է լեառն Մա-
սիոս՝ որ կայ ՚ի վերոյ Միւզգոնացն Մի-
ջագետաց ՚ի հարաւակոյս կողմանէ ,
յորս է Եփրիս քաղաք : Իսկ ՚ի կող-
մանէ հիւսիսոյ կայ Մովսիսին ընդ մէջ
Մասիոսի և Անտիտաւրեայ : Արդ . սա

(Անտիտարուս), յեփրատայ և 'ի Տաւրոսէ առեալ սկիզբն յանդի յարևելեայ կողմանս Հայաստանի՝ անջրպետեալ զմիջինն Սովիիինի, և 'ի միւսմէ կողմանէ ունի զՊկիկիսինի՝ որ եղեալ է ընդ մէջ Տաւրոսի և գետոյն Եփրատայ, մինչ չև խոտորեալ նորա 'ի հարաւայինն կոյս . արքունական վայր Սովիիինայ՝ է կարկաթ իսկերտա . իսկ 'ի վերոյ Մասիոսի յեւս արևու առ Գորդիւինեալ՝ է Նիփատէս, և յետոյ Արոս՝ յորմէ ծնանին Եփրատէս և Երասխ . մին՝ յարևմուտս կոյս, և միւսն՝ յարևելս . իսկ Նիբարոս ձգի երկայնի մինչև 'ի Մարաստան :

Գ. Ասացաւ արդ եթէ որպէս հոսի Եփրատէս . իսկ Երասխ յեւս կոյս արևու բերեալ մինչև յԱտրոպատինի, խոտորի 'ի մուտս կոյս և զհիւսիսեալ, հոսի նախ առ երի Ազարաց, ապա՝ Արտաքսատայ քաղաքացն Հայոց . և հուսկ յետոյ ընդ Երասխական գաշտն անցեալ բերանանայ 'ի կասպիականն ծով :

Դ. Ի նմին Հայաստան աշխարհի բազում են լերինք և բազում լեռնադաշտակք յորս ոչ գիւրին բուսանի որթ : Են և բազում խոխովք, կէսք խուն ինչ և կէսք արդաւանդք յոյժ . զոր օրինակ գաշտն Երասխական, ընդ որ հոսեալ գետոյն Երասխայ 'ի ծայրս Աբանիայ՝ անկանի 'ի կասպիականն ծով, և ապա Սակասինի, որ առ երի կայ Աբանիոյ և կուր գետոյն, և Գովգարինի : Ամենայն վայրս այս պտղաբեր է մրգովք և ընտանի ծառովք և մշտագուարճ անկովք, բերէ և ձիթենի : Է և փաւինի գաւառ Հայաստանի և կովմիսինի և Որքիստինի, որ ունի յաճախութիւն ձիոց . իսկ Գորդինի և Կամիւրինի ընդ հիւսիսի հային և ձիւնախաղաղք են յոյժ, և յարեալ կցին ընդ կաւկասեան լերինսն և ընդ կուրքիս : Ուր պատմի զի բազում անդամ 'ի կիրճս անդր լեռանց՝ բազմութեան ամբոխի թաղիլ ընդ ձեամբք, յորժամ ձիւնամեծ ձմեռն գործիցի այլ ունին 'ի ձեռին և գաւառայան իմն՝ որպէս զի յայնպիսում վտանգի 'ի վեր բարձրացուցեալ տուրևառ չնչոյ ունիցին, և ազդ արարեալ նշանակիցեն ան-

ցաւորաց՝ զի լիցի հնար օգնակսնութեան, և փորեալ կարիցեն ապրել . իսկ 'ի ձեան անդ ասեն լինել գուղճս ինչ հողոյ խորամիջոցս՝ որոց իբրև 'ի հանդերձս ծրարեալ ունիցին շուր սուրբ, և ճճիք 'ի նմանէ գեռայցեն, զորս որդունս կոչէ Ապոլլոնիսիւէս, և Թէոփանէս՝ ճճիս փայտի, և եթէ 'ի նոսա կրիցին շուրբ սուրբք, և պատանուալ զհանդերձսն՝ ըմպիցեն . այլ զծնունդ և զսերումն ճճեացս այսոցիկ նման գոլ ասեն մըժղկաց՝ որ 'ի բոցոյ և 'ի հողոյ բրածոյիցն 'ի դուրս երևիցին :

Ե. Եւ պատմեն զՀայոց աշխարհէն, եթէ զառաջինն փոքր էր, և աճեալ մեծացաւ 'ի ձեռն Արտաքսատայ և Զարիագրիսայ, որ զօրավարք էին յառաջագոյն Անտիոքայ մեծի, և զկնի պարտութեան նորա՝ թագաւորեաց մին 'ի Սովիիինի և յԱլիսինի և յՈրդանանտիս և այլոց ոմանց, իսկ երկրորդն՝ Արտաքսատայ : Սորա մեծացուցին զերկիրն՝ հատեալ ինչ ինչ 'ի դրակից սահմանակից ազգացն, 'ի Մարաց՝ զկասպիանէ և զՓանիտիս և զհաստորպետան . յիւ բեռիացոց՝ զլեռնակողմանս Պարիւսադրևայ և զԲորդինի և զԳովգարինի՝ յայնկոյս կուր գետոյն . 'ի ֆալիւբայց և 'ի Մուսիւնիկեայց՝ զկարինիդիս և զԳրասերքսինի, որ սահմանակիցք են փոքուն Հայոց կամ թէ և բաժինք նորա . 'ի Կատանոնեայց՝ զՊկիկիսիինի և շուրջ զկողմամբք Անտիտարուսայ . և յԱտրոց՝ զՏարոնիտիս, որպէս զի ամենեցուն սոցա լինել համարորբառս և համալեզուս :

Զ. Եւ քաղաքք Հայաստանի են՝ Արտաքսատա, զոր և Արտաքսիասատա կոչեն՝ կառուցեալ յԱնիիրասայ վանն արքային Արտաքսիայ, և Արքասատա քաղաք, երկրքին առ Երասխաւ . Արտաքսա առ սահմանօրն Ատրոպատիայ, և Արտաքսատա առ Երասխական դաշտին՝ գեղեցկանիտ և տուն արքունական : Եւ կայ յանկեանս ցամաքակղզւոյ, պարբապեալ շուրջանակի որմովք զգետն բաց 'ի կրճացն . և զկիրճսն փոս և պատնէլ պատեալ ունի : Ոչ ինչ կարի հեռի 'ի քաղաքէն են տունք զանձուց Տիգրա-

նայ և Արտաւազդայ, գղեակք լեռնա-
կանք, Բարբուրա և Ուանի. էին և այլք
առ Եփրատաւ : ՉԱրտազերս վտարան-
ջեցոյց Աղովր բերդապահ . և զորա-
վարք կեսարու պատնէշ պաշարմամբ
հարուստ մի նեղեալ առին և կործա-
նեցին զպարիսպսն :

Է. Գետք բազումք են յայխարհին յայն-
միկ . և նշանաւորքն փասիս և Լիւկոսի
որ 'ի Պոնտականն հոսեն ծով, (Երա-
տոսթենէս փոխանակ Լիւկոսի ոչ ու-
ղիղ գնէ խառն 'ի խուռն զթերմոզոն) .
իսկ 'ի կասպիականն հոսին՝ Կուր և Ե-
րասխ . իսկ 'ի ծովն կարմիր անկանին
Եփրատէս և Տիգրիս :

Ը. Են և ծովակք կամ լիճք յայխար-
հին Հայոց մեծամեծք, յորոց մի է Ման-
տիանի՝ որ կապուտակն թարգմանի .
մեծագոյն, որպէս ասի, յետ Մէով-
տեայ, աղտաղտին ջուրք, որ ձգի մին-
չև ցԱտրոպատիաս . յորում գոն և ա-
ղահանք : Եւ Արսինի, զոր և թովպիտիս
յորջորջեն, բորակային է՝ որ զհան-
դերձան լուանայ և թափէ . վասն որոյ
ոչ է յարբումն պիտանի ջուրն այն : Բնդ
այն անցանէ Տիգրիս 'ի լեռնակողմանց
Նիփատայ առեալ սկիզբն, և ոչ խառնի
ընդ ճահիճսն՝ առ երազընթացութեան՝
յորմէ և զանունն ընկալաւ . քանզի
Մարք գնեան կոչեն տիգրիս . ունի սա
ազդի ազդի ձկունս . իսկ լճականք միազգ
են : Ի փորուածս անդ լճին՝ գեան Տի-
գրիս յանդունդս ուրեք խորասուզեալ,
և զբազում վայրս ընդ երկրաւ հա-
տեալ անցեալ ապա 'ի յայտ գայ առ
Քարթլիստեաւ . և անտի առ Ուլպիս և
առ Շամիրամայ կոչեցեալ պատուարսն
ձղեալ ընթանայ, յաջմէ թողեալ զՂոր-
դիացիս և զՄիջագետս ողջոյն . իսկ Ե-
փրատէս, զնորին հակառակն, յահեկէ
ունի զերկիրն զայն : Եւ մտեալք 'ի մի-
մեանս սղա երկրքն և յօրինեն զՄի-
ջագետս . և ապա մին գնայ ընդ Սիլեւ-
կիս 'ի ծոցն պարսկական, և միւսն
ընդ Բաբելոն . որպէս ասացեալ է մեր
ուրեք 'ի բանսն որ ընդդէմ Երատոս-
թենեայ և իպպարքոսի :

Թ. Են և բովուց տեղերոսկոյ 'ի Հիւս,

պիրատիս առ Կարալլայս, յորս զՄե-
նոֆն առաքեաց զօրու Ալեքսանդրոս,
և 'ի բնակչացն սատակեցաւ . են և այլ
բովք և որ սսնտիշքս կոչի, զոր և յոր-
ջորջեն հայ գոյն, նման ծիրանոյ : Եւ
այնպէս ձիարոյձ է երկիրն, ոչ ինչ ընդ-
հատ 'ի Մարաստանէ, զի և Նիսեան
երկւարքն և անդ լինին՝ որովք 'ի պէտս
պաշտէին թագաւորք Պարսից : Եւ նա-
խարարն Հայոց ամի ամի քսան հազար
առաքէր ձիս 'ի Միհրական տունն առ
Պարսիկն : Եւ Արտաւազդ բայց յայլմէ
հեծեալզօրուէն եցոյց Անտոնիոսի վեց
հազար երկւարաց զրահազգեստից,
յորժամ ընդ նմա 'ի Մարս ասպատակ
գնէր : Եւ հեծելութեանս այսմիկ ոչ
Մարք միայն և Հայք էին սիրոզք, այլ
և Ալքանք . զի և նոքա լանջապանակս
առնուն 'ի կիր :

Ժ. Այլ և փարթամութեան և զօ-
րութեան ախարհին Հայոց ոչ զոյգն
հաւաստիք կան 'ի միջի . զի յորժամ
Պոմպէոս արծաթոյ տապանդս վեց հա-
զար արկ 'ի վերայ Տիգրանայ հօրն Ար-
տաւազդայ, բայտեալ նա անդէն 'ի զօ-
րականն Հռովմայեացոց, և առ մէն զի-
նուոր յիտուն գրաքմայս (և հարիւր),
և հարիւրապետին՝ հազարս, հեծելա-
պետին և հազարապետին՝ տաղանդ մի :

ԺԱ. Իսկ զմեծութիւն ախարհին
Թէոփանէս ասէ լինել, լայնութիւն
լարս հարիւր, և երկայնութիւն՝ կրկին
ևս . և զլարն համարէ քառասուն վաս-
ւանս : Կարի է թիւ համարոյ սորա .
այլ մտ 'ի ճշմարտութիւն է, զերկայ-
նութիւնն առնուլ փոխանակ լայնու-
թեանն՝ զոր ասէ գա, և զլայնութիւնն
համարել կիսոյ կէս 'ի նմանէ, կամ ևս
սակա : Այդ բնութիւն Հայաստան աշ-
խարհի և զօրութիւնն այսպիսի է :

ԺԲ. Եւ այսպիսի իմն հնախօսութիւն
է զազգէս զայսմանէ, Արմենոս յԱր-
մենիոսէ 'ի Թետալական քաղաքէ, որ
կայ ընդ մէջ Փերաց և Լարիսայ առ Բի-
բէաւ, որպէս ասացաւ, 'ի միասին ընդ
Յասոնի չղբաւ զօրու 'ի Հայաստան .
սմին անուանակից ասեն զՀայաստան
Կիւրսիլոս փարսալիսացի, և Միգիոս

լարիսացի՝ որք ընդ Ալեքսանդրու զինուորեալն էին : Իսկ 'ի նոցանէ որք ընդ Արմենիոսին էին՝ ոմանք յԱկիլիսիին եղին զբնակութիւնս՝ որ կայր յառաջադոյն ընդ Սովփիւնացուովք . և ոմանք 'ի Սիւսպիլիոսի մինչև 'ի Կալաքիին և Ագիարիին՝ արտաքոյ սահմանացն հաստանեայց : Եւ զհայեցի զգեսասն նոյն ասեն ընդ թեալականաց , որպիսի արձակ պատմուճանս՝ զոր թեսալացիս կոչեն յողբերգութիւնս , և գօտևորին առ լանչօքն և պարեգօտս , որպէս և ողբերգակքն նմանեալք թեսալացացոց . քանզի նոցա այսպիսի իմն պատմուճանք 'ի դէպ էին . Իսկ թեսալացիք արձակս յոյժ զգեծուն (որպէս հաւանական թուի , քանզի առաւել հիւսիսայինք են և զցրտային կողմանսն բնակեալ են քան զայլ հեղինացիս) , յարմարագոյնք էին , և դիւրաւ դերասանիքն 'ի նմանութիւն կրթէին նոցա 'ի տեսարանսն . ասի ունել և սոցա ախորժակ հեծելութեան թեսալականս , սոյնպէս և Մարաց : Իսկ զարչաւանաց Բաստնեայ վկայեն և Բաստնական տաճարքն . յորոց է ինչ՝ զոր բռնաւորքն կանգնեցին , որպէս յԱրգերացիս Պարմենիովն զտաճարն Բաստնեայ :

ԺԳ. Եւ զԻրախ ասեն կոչեցեալ յԱրմենիոսէ՝ անուանակից Պինէոսի վասն նմանութեանն . զի և նա (Պինէոս) կոչէր երբեմն նովին անուամբ (Իրախ) , զի ճիղքէր բաժանէր զՌոսս յԱլիմպեայ և հոսէր ընդ Տեմպեանս : Իսկ այն (Իրախ) որ 'ի Հայս է , իլեալ 'ի Երանց ծաւալէր 'ի հուսն , և մորացեալ լճանայր 'ի մօտ անդաստանսն՝ քանզի ոչ ունէր ելլա ուստեք . Իսկ Բաստնեայ զնմանութիւն Տեմպեանց գործեալ , բերանս իմն յորինէր 'ի նմա , ընդ որ ընթացեալ դարահոս վիժէր 'ի կասպիականն ծով . յորմէ և Երասխականն դաշտ ունայնացեալ մերկացաւ , և գետն այն ընդ քարավազս հոսի :

Այս՝ զոր վասն գետոյն Երասխայ ասացաք , ունի արդեւք կերպարանս իմն հաւանականութեան . Իսկ Երողոտեայ բանն ոչ ուրեք այնպիսի ինչ . քանզի ա.

սէ՝ եթէ 'ի Մատիանացուց հոսեալ՝ բաժանի 'ի քառասուն գետս , և անչրպետէ ընդ Սկիւթացիս և ընդ Բակարիացիս . և Կալլիսթենէս զնորին չբաւ ըզհետ :

ԺԴ. Ասի ևս զի ոմանք յինիանացուց բնակեն 'ի Վիտիա , և կէսք 'ի վերոյ քան զՀայս 'ի վերայ Արսի և Նիքարոյ . սոքա Տաւրոսի են բաժինք . զի Արսու կայ առ երի ճանապարհին որ տանի յԵկբատանս , անդր քան զԲարիդայ տաճարն : Պատմի եթէ է և ոմանք 'ի Թրակացուց որ կոչին Սարապարացիք , այս է՝ գլխահատքն , 'ի վերոյ քան զՀայս բնակեալ են , մօտ 'ի Գուրանիացիս և 'ի Մարս , արք վայրենիք և անհաւանք , լեռնականք , գլխագերծք և գլխահատք . զայս նշանակէ և անունն Սարապարացիք . ասացեալ է մեր և զՄիդիայէ 'ի Մարաց նկարագիրան : Աստի զմտաւ ածեալ ասեն եթէ Մարք և Հայք իցեն ասղականք թեսալացուց և սերնդոց Բաստնեայ և Միդիայ :

ԺԵ. Այս հին զրոյցք են . Իսկ որ քան զայս նորագոյն և կրտսերագոյն և 'ի Պարսից սկիզբն առեալ մինչև ցմեզ , որպէս արժանն իցէ սղագունիք պատմել , զի կարան զՀայաստան Պարսիկք և Մակեդոնացիք , որ յետոյ տիրեցին Ասորուց և Մարաց : Եւ հուսկ վերջին եկաց Ռոմնոտէս 'ի սերնդոց Հիւդաւնեայ՝ 'ի միոյ յեթեանց անտի 'ի Պարսիցն աւագայ : Ապա 'ի զօրավարացն Անտիոքու մեծի՝ որ մարտն եղին ընդ Հռովմայեցիս , յերկուս բաժանեցաւ , յԱրտապարսաս և 'ի Զարիադրիս իլեխանսն՝ որ 'ի հրամանէ արքունի իլխեցին կողմանցն այնոցիկ : Իսկ իբրև նա 'ի պարտութիւն մատնեցաւ , նոքա 'ի Հռովմայեցիս անդր ձեռն ետուն՝ անձամբ թաղ կապեալ և թագաւոր զան ձինս յորՊրջեցին : Արդ յԱրտաքսիասէ սերեալ Տիգրան կալաւ զսեփականն իւր զբնիկ Հայաստան , (որ կայ առ երի Մարաց և Ալբանացուց և Իբեոիացուց մինչև ցկողբիս և ցկապպադոկիս որ առ Երսիսեալ) . և 'ի Զարիադրեայ սերնդեամբ յառաջ եկեալ Սովփիւնացին (ժո.

փացի) Արտանէս՝ էառ զհիւսիսային կողմանս և զարևմտականն. այլ ապա ՚ի պարտութիւն մատնեցաւ ՚ի Տիգրանայ, որ ամենայն տէր եղև: Բազմա-յեղանակ բազդ՝ զկեանս սորա (Տիգրանայ) փոփոխեաց. զի յառաջագոյն եղև պատանդ առ Պարթևս, ապա աջատութիւն եզրտ ՚ի նոցանէ, ընկալեալ վարձս և թանասուն հովիտս զՀայաստանի. և զորացեալ կալաւ պայտս սրով իւրով և զնոցայսն յաղարտ վարեալ գերփէր՝ որ զՆինոսիւ և զԱրբելաւ կային տեղիս: Ընդ հարկաւ նուաճեաց և զԱրտապատինացին և զԳորդիւացին, ընդ նմին և զմնացեալ մասն Միջագետաց, և զԱտրիս և զՓիւնիկէ, անցեալ ընդ Եփրատէս, կալաւ բռնութեամբ ուժով: Յայս չափ ամբարձեալ, և քաղաք ևս կառոյց մօտ առ Իբեուիա ընդսա և ընդ Եփրատական կամուրջս ՚ի միջի, զոր անուանեաց Տիգրանոկերտա. յերկոտասան քաղաքաց Հելլենացոց՝ զոր յաղարտ վարեալ էր՝ ածեալ բնակեցոյց անգր զբնակիչսն: Ելին եհաս Լուկուլլոս՝ որ ճակատ մղէր յայնժամ ընդ Միթրիդատեայ, և զբնակիչսն յիւրաքանչիւր տունս արձակեաց, և զկազմածն՝ որ չև ևս էր ՚ի գլուխ ելեալ՝ հիմն ՚ի վեր տապալեաց, և ի թող զոյզն ինչ չէնս. վանեալ վկանդեաց զինս և յԱտրոսոց երկրի անդ և ՚ի Փիւնիկաստան: Չնա յաջորդեաց Արտաւազդ. որ աշոգութեամբ յորանայր՝ յորժամ միա միտն էր ընդ Հռովմայեցոց իշխանու-

թեամբ. այլ իբրև մատն եղև Անտոնիոսի առ Պարթևս ՚ի պատերազմին, և լոյծ զվրէժսն: Քանզի վարեալ ածաւ յԱլեքսանդրիա կալանաւոր ձաղեալ, և ՚ի քաղաքի անդ եկաց ՚ի դիպահոյ. և ապա ՚ի բորբոքել Ալտիական պատերազմին՝ սպանաւ: Յետ նորա բազուկը իշխեցին՝ որ հպատակ կային Կեսարու և Հռովմայեցոց, որպէս և այժմս է:

ԺԶ. Արդ ամենայն գիցն Պարսից պաշտօն տանին և Մարք և Հայք. իսկ առաւել իմն Հայք պաշտեն զԱնաիտիս, տաճարս կանգնեալ ՚ի տեղիս տեղիս, և յԱլիլիսիսի՝ ուր զոհեն նմա ծառայս և աղախնայս. և այս չնչ ինչ զարմանք. զի և զբոստերս իւրեանց նմա նուիրեն ըզկոյս՝ աւազանի և անամ մարդիկ աշխարհին. զի օրէնք են նոցա, զկնի հարուստ մի ժամանակս անդ պոռնիկելոյ՝ հաստիլ յարս և խօսել յամուսնութիւն. քանզի ոչ ումեք անարժան թուի ընդ այնպիսում զուզել կնոյ: Չսոյն զայս ձև օրինակի պատմէ և Երոզոտոս զիւզացի կանանց՝ եթէ ամենեքին ՚ի պոռնկութիւն տան զինքեանս: Եւ զհոմանիս իւրեանց այնպէս քաղցրութեամբ տածեն, մինչև հիւրդոյս ևս տալ, և պարզ և ևս առաւել ընձեռեն ինքեանք քան առնուն: Ի նոցանէ՝ որպէս եթէ յառաջորդին շահուցն մատակարարեալ նոցա զայդ ամենայն. և ոչ զամենայն հիւրան ապակցականեն միօրինակ, այլ որ առաւել ՚ի նմին պատուի ընդ նոսա իցեն հաւասարք:

ԱԳԱՔԱՆԳԵՂՈՍ ՀՍԱԹՐԷՏ ԿՈՒԴՇՄԻՏԻ ԳԵՐՄԱՆԱՅԻՈՅ:

(Բազմամէպ, հատոր 12, էջ 297):

Ագարակեղոսի յառաջարանը: — Հայերէնին ճոխ յառաջարանն ¹ եօթն

1 Եօթն ձեռագրաց երկուքն միայն՝ առ յառաջարանը ունին որ ինչուան հիմայ տպագրութեանց մէջ կը պահուէր: Երկայն այլաբանութեանք՝ արևելեաց մը համար աշխատանք չըրջարանութիւններն՝ ծածկուած են կերպով մը հայերէնի վայելուչ շարագրութեամբ, ընտիր զարձուածներով, բարդ բառից կորովութեամբ:

ձեռագրաց երկուքի մէջ միայն կը զըստ

որովք չօխ է: Վաւերականութեան վրայ տարակոյս չկայ: Զենոք Գլակ ժամանակին մատենագիր, Մովսէս Խորենացի և Խորենացոյն ժամանակակիցն Ղազար Փարպեցի և այլք ստեպաս յառաջարանը կ'ազնարկեն: Ասկայն կան դեռ շատ մթութիւնք, երկբայականք և գրչաստալք, որ իմաստին և հուսովեան փոսա կը բերեն: Ի. Կու. Ագաթ. էջ. 201: